

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2019**

«Շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենայի տրամադրում՝ համայնքներում վերարտադրողական առողջության օնկոլոգիական հիվանդությունների կանխարգելման և հոգեկան առողջության բարելավման համար» ծրագրի ավարտի արարողություն

2021թ. Մարտի 2-ին, «Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայում տեղի ունեցավ «Շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենայի տրամադրում՝ համայնքներում վերարտադրողական առողջության օնկոլոգիական հիվանդությունների կանխարգելման և հոգեկան առողջության բարելավման համար» 29,917 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, ՀՀ ԱԳՆ ամերիկյան երկրների վարչության պետ պարոն Ա. Եզանյանը, և այլոք:

Սույն ծրագրի շրջանակներում, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության աջակցությամբ, կլինիկան ձեռք է բերել շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենա, որի շնորհիվ բժշկական օգնություն է ցուցաբերվել գյուղական 21 համայնքերի, մասնավորապես Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերի աղքատ և սոցիալապես խոցելի բնակչությանը: Ծրագրի միջոցով մեթոդաբանական աջակցություն է ցուցաբերվել համայնքերի ամբուլատորիաների առաջնային բուժօգնության բժշկական անձնակազմին, ինչպես նաև առողջապահության բնագավառի կամավորներին՝ այսպիսով բարելավվելով թիրախային կլինիկաների բուժանձնակազմի շարունակական մասնագիտական վերապատրաստումը:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Վարդգես Ավագյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը բացառիկ հնարավորության համար, որի շնորհիվ «Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկային հնարավորություն է ընձեռվել շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենա ձեռք բերել և շահառու համայնքներում ցուցաբերել բժշկական օգնություն:

Իր հերթին դեսպան Յամադան շեշտեց, որ հատկապես ուրախ է իմանալ, որ շարժական կլինիկայի մեքենան հնարավորություն է ընձեռել շարժական բժշկական թիմին աջակցություն ցուցաբերել տեղական համայնքների ամբուլատորիաների առաջնային բուժօգնության բժշկական անձնակազմին, ինչպես նաև առողջապահության

բնագավառի կամավորներին: Լավ առողջությունն անփոխարինելի դեր է կատարում մարդկային ստեղծագործական և բարեկեցության գործում: Քաղաքացիների առողջության բարելավումը վճռականորեն կբարձրացնի երկրի տնտեսական արդյունքը՝ այդպիսով ուղղակիորեն կաջակցի նաև երկարաժամկետ տնտեսական զարգացմանը: Դեսպան Յամադան նաև հույս հայտնեց, որ այս նախագիծը կնպաստի այդ դրական ազդեցություններին:

Արարողության վերջում «Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայի աշխատակիցները իրենց շնորհակալությունը հայտնեցին դեսպան Ջուն Յամադային և Ճապոնիայի կառավարությանը նման հնարավորության համար:



Դրամաշնորհային աջակցության շրջանակում ձեռք բերված շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենան



Դոկտոր Ավագյանը դեսպան Յամադանին է ներկայացնում շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենան



«Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայի տնօրեն պրն. Ավագյանի ողջունի խոսքը



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Արարողության մասնակիցները



Դեսպան Յամադան «Մեփլ Լիֆս» հայկանադական բժշկական կիլինկայի անձնակազմի հետ